ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.06.2017թ. թիվ 04/26-1/11695-17 գրությամբ «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.06.2017թ. թիվ ՆՋ/7840-17 գրության հիման վրա, 28.06.2017թ. թիվ 04/26-1/11695-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ առողջապահության նախարարությունը 20.06.2017թ. թիվ ՆՁ/7840-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ «ԼեյկոԱլեքս» ՍՊ ընկերությունը հայտարարվել է «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով մրցույթի ընտրված մասնակից, սակայն վերջինիս կողմից NN 75 և 78 չափաբաժինների համար ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատվել են մրցույթի հրավերի պայմաններին ոչ համարժեք: Ուստի, «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով մրցույթի մասնակից «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակացելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու նպատակով ներկայացնում ենք «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով ընթացակարգին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Վ. Մանուկյանը:

3. **<u>«Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ն 21.06.2017թ. Խորհրդին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ «ՀՎԱԿ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով 75 և 78 չափաբաժինների մասով որպես ապրանքի տեխնիկական բնութագրեր պահանջվել է նաև, որ ապրանքները պետք է լինեն արտադրողի 2,5լ հերմետիկ փաթեթավորմամբ:

«Լեյկո Ալեքս» ՍՊԸ–ն մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով գնման ընթացակարգին և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից նաև հրավերով 75 և 78 չափաբաժինների մասով:

Ընկերությունը գնային առաջարկում 75 չափաբաժնի համար գնման առարկայի անվանումը նշել է՝ Իզոպրոպիլ սպիրտ, 99%, 1լ տարաներով, իսկ 78 չափաբաժնի համար՝

Ացետոն, 1լ տարաներով, այսինքն ընկերությունը հստակ նշել է, թե ինչ և քանի լիտրանոց տարաներով է պատրաստվում մատակարարել նշված ապրանքները:

Այս պարագայում Պատվիրատուն արձանագրելով անհամապատասխանություն հրավերի օրինակելի ձևի պահանջների նկատմամբ, պետք է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն մերժեր ընկերության հայտը, իսկ չմերժելու դեպքում փաստացի ընդունում է ընկերության կողմից առաջարկված տարբերակը:

Պատվիրատուի կողմից Ընկերությանը ծանուցվել է և առաջարկվել է ներկայացնել որակավորումնը հիմնավորող՝ հրավերով նախատեսված, այդ թվում նաև ՀՀ կառավարության 168-որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի զ ենթակետով նախատեսված ապրանքի անվանումը և տեխնիկական բնությագրերը: Ընկերության կողմից ներկայացվել է ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը, սակայն Պատվիրատուն արձանագրել է անհամապատասխանություն՝ առանց որևէ հստակեցման, թե ինչն է անհամապատասխան և «Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ին տվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն: «Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ն կրկին ներկայացրել է ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը, ևս մեկ անգամ նշելով, որ Պատվիրատուի կողմից նախատեսված ապրանքները պատրաստվում է մատակարարել 1լ տարաներով, այլ ոչ 2.5լ տարաներով, սակայն այն չի ընդունվել պատվիրատուի կողմից և մերժվել է՝ գնահատելով ընկերության ապրանքները ոչ համարժեք՝ խախտելով Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված՝ այն է հայտը մերժվել է առանց հստակ պատճառաբանության:

Ելնելով վերոգրյալից, խնդրում են Ձեզ «Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ին չներառել Ցուցակում, քանի որ ընկերությունը ամենևին չի ներկայացրել կեղծ տվյալ կամ տեղեկատվություն և ի սկզբանե գնային առաջարկի մեջ նշել է, թե ինչ ապրանք է պատրաստվում մատակարարել, որը պետք է մերժվեր պատվիրատուի կողմից, սակայն գնման ընթացակարգի այդ փուլում գնահատվում է բավարար, իսկ հետագայում, առանց որևէ հստակ հիմնավորման արձանագրվում է, որ ապրանքները համարժեք չեն»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Էդվարդ Գրիգորյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/17 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 28.06.2017թ. թիվ 04/26-1/11695-17 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության 20.06.2017թ. թիվ ՆԶ/7840-17 գրությունը, «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 01.06.2017թ. նիստի N 7 և 05.06.2017թ. նիստի N 8 արձանագրությունները, «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, Ընկերության 12.07.2017թ. գրությունը.

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի 75-րդ, 78-րդ և 81-րդ չափաբաժինների մասով: Նույն չափաբաժինների մասով Հանձնաժողովը 13.04.2017թ. որոշմամբ Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Սակայն, Ընկերության կողմից ներկայացված հայտը 75-րդ և 78-րդ չափաբաժինների մասով հանձնաժողովի կողմից 01.06.2017թ. թիվ 7 արձանագրությամբ մերժվել է՝ Ընթացակարգի տեխնիկական բնութագրին ոչ համարժեք լինելու պատճառաբանությամբ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 4.1 հավելվածով՝ հրավերով սահմանված առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (75, 78, 81) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը համարժեք է (են) «ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՎԿԱԿ-2017-14» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Ընդ որում, առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում Ընկերությունը պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Խորհրդում 30.06.2017թ. կայացած նիստի ժամանակ «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում 75-րդ չափաբաժնի համար գնման առարկայի անվանումը նշվել է՝ Իզոպրոպիլ սպիրտ, 99%, 1լ տարաներով, 78-րդ չափաբաժնի համար՝ Ացետոն, 1լ տարաներով, իսկ Ընթացակարգի Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է նույն անվանումով ապրանքների 2,5 լ ծավալով տարաների պահանջ: Այսինքն, Ընկերությունը հստակ նշել է, թե ինչ տարաներով են իր կողմից մատակարարվելու նշված ապրանքները:

Ընկերության ներկայացուցիչը պնդեց, որ Հանձնաժողովը, նախապես տեղյակ լինելով նշված ապրանքների մատակարման՝ Ընկերության կողմից առաջարկվող պայմաններին, պետք է մերժեր ընկերության հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխելու հիմնավորմամբ, մինչդեռ Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը գնահատվել է բավարար, և առաջարկվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում նաև առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Հանձնաժողովի կողմից չի նշվել արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն նկարագրությունը, այսինքն, Հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություն՝ առանց որևէ հստակեցման, թե ինչն է հանդիսանում անհամապատասխանության հիմքը, և «Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ին տվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

«Լեյկո Ալեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը խնդրեց Ընկերությանը չներառել Ցուցակում, քանի որ Ընկերությունը չի ներկայացրել կեղծ տեղեկատվություն, և ի սկզբանե գնային առաջարկի մեջ նշել է, թե ինչ ապրանք է պատրաստվում մատակարարել:

Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ Հանձնաժողովի համար Ընկերության հայտը մերժելու հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է առաջարկվող ապրանքի՝ արտադրողի կողմից հերմետիկ փաթեթավորված լինելու հանգամանքը հավաստող նշումը, այլ ոչ թե առաջարվող ապրանքի տարաների ծավալների տարբերությունը, ինչը, ըստ Պատվիրատուի ներկայացուցչի, ընդունելի չէ:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)

• 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

• 49-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային

օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված պարնաների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

Հրավերի 7.7 կետի համաձայն՝ նույն հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ Մասնակցի կողմից փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը: Նույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հրավերի 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և նույն հրավերի 4.3 կետի «զ» ենթակետով նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդն արձանագրում է, «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում Ընկերության կողմից Ընթացակարգի 75-րդ և 78-րդ չափաբաժիններով գնման ենթակա ապրանքի բնութագրերում նշված տարաների ծավալները ընդունելի են Պատվիրատուի համար:

Խորհուրդն արձանագրում է նաև, Ընթացակարգի Հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերում Պատվիրատուի կողմից որպես Ընկերության հայտը մերժելու հիմքը հանդիսացել է ապրանքը արտադրողի կողմից հերմետիկ փաթեթավորված լինելու մասին նշման բացակայությունը:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ մերժելով Ընկերության հայտը, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 49-րդ կետով, ինչպես նաև Հրավերի 7.7 կետով սահմանված պահանջները, քանի որ վերջինիս կողմից չի նշվել Ընկերության հայտով ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանության նկարագրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության 28.06.2017թ. թիվ 04/26-1/11695-17 գրությամբ «ԼեյկոԱլեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ